ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի
Որոշում N 1/218Ա

11/04/2019

«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ ՀԱՍԱՐԱԿ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ԱԶԴԱԳԻՐԸ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ ՀԱՍԱՐԱԿ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ԱԶԴԱԳԻՐԸ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ-ն 2019 թվականի մարտի 11-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ է ներկայացրել 1,350,000 հատ 1,000 ՀՀ դրամ անվանական արժեքով հասարակ անվանական բաժնետոմսերի ազդագրի գրանցման հայտ, ինչպես նաև համապատասխան ազդագիրը և «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով ազդագրի գրանցման համար պահանջվող բոլոր փաստաթղթերը:

Ընկերությունը 2019 թվականի ապրիլի 5-ին ներկայացրել է ազդագրի լրացում:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածը և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի եզրակացությունը (2019 թվականի ապրիլի 10-ի թիվ 15 արձանագրություն)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Գրանցել «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ կողմից ներկայացված 1,350,000 հատ 1,000 ՀՀ դրամ անվանական արժեքով հասարակ անվանական բաժնետոմսերի ազդագիրը:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ **ՆԵՐՍԵՍ ԵՐԻՑՅԱՆ**